

Հաշվետու գործակալությունը՝ Երկիրը՝	Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագիր Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի մասով Հայաստան <b>ԱՌԱՋՆԹՍՅԻ ՍՏԱՆԴԱՐՏ ԶԵԿՈՒՅՑ</b>
Համարը և անվանումը՝	Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում ՄԱԶԾ/ԳԷՖ/00057439/00060500
Հաշվետու ժամանակաշրջանը՝	Հունվար-դեկտեմբեր 2012թ.

## I. ՆՊՍՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է պահպանել գլոբալ նշանակություն ունեցող Հայաստանի կենսաբազմազանությունը: Ծրագրի խնդիրն է նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելու ներկայիս պահպանվող տարածքների համակարգի ներքո էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածությունը և առավել ակտիվ մոտեցում ցուցաբերելու կենսաբազմազանության պահպանության գործում: Ծրագրի երկու հիմնական շեշտադրումներն են. (1) ռացիոնալացնել պահպանվող տարածքների համակարգը՝ արգելավայրերի կայացմանն ու գործարկմանը վերաբերող իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ համակարգերը բարելավելու միջոցով և (2) զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ փորձարկելով հատուկ պահպանվող տարածքների կառավարման ներկայումս Հայաստանում գրեթե գոյություն չունեցող գործիքները:

Ծրագրի հիմնական արդյունքներն են՝

1. Արգելավայրերի ստեղծման, կառավարման և բիզնես պլանավորման ազգային գործառնական ուղեցույցներն ու նորմերը:
2. Կմշակվի արգելավայրերի կառավարման գործում տարբեր հաստատությունների ինստիտուցիոնալ պարտականությունները և պատասխանատվությունները ամրագրող ենթաօրենսդրական ակտ:
3. Երեք նոր արգելավայրեր. «Գնիշիկ»-ի ստեղծում Վայոց Ձորի մարզում, «Խուստուփ»-ի ստեղծում և «Զանգեզուր» պետական արգելավայրի ընդլայնում Սյունիքի մարզում՝ մոտ 48,000 հեկտար ընդհանուր մակերեսով:
4. Կմշակվի հայեցակարգ երկու կոնկրետ մոդելների վերաբերյալ (զուտ համայնքային կառավարում և համատեղ կառավարում), որոնք կփորձարկվեն երեք համապատասխան արգելավայրերում:
5. Ազգային ուսումնական դասընթացներ, շեշտադրելով IUCN-ի IV կատեգորիայի արգելավայրերը: Տեղական մակարդակով ծրագիրը կնպաստի ցուցադրական արգելավայրերում տեղեկատվական և կրթական երեք կենտրոնների ստեղծմանը:
6. Կմշակվեն և յուրաքանչյուր փորձնական արգելավայրում կիրականացվեն համակցված կառավարման և բիզնես պլաններ, որոնք հիմնված կլինեն միջազգային փորձի վրա և կհանդիսանան փոքր բիզնեսի համար իրապաշտական ուղեցույց: Պլանները կօգտագործվեն որպես ռեսուրսների կայուն օգտագործման, ինչպես նաև տուրիզմի, կայուն արածեցման, կարգավորված սիրողական որսորդության և վաճառման ենթակա բույսերի հավաքման հիմք:
7. Կառավարման և եկամտաբեր գործունեության մեկնարկ՝ (i) տեղական համայնքների անդամների աջակցությամբ և մասնակցությամբ որսագողության դեմ պայքարելու գործիքներ. (ii) էկոհամակարգերի մոնիթորինգի ծրագրերի իրականացում. (iii) կենդանիների արածեցման համակողմանի ծրագրի իրականացում. (iv) տուրիզմի կայուն զարգացում:
8. Կենսաբազմազանության արդյունավետ պահպանության ոլորտում արգելավայրերի ձախողումը հաղթահարող կրիտիկական զանգվածի ցուցադրում:

Մույն Ծրագրի ջանքերը կգործադրվեն հատուկ պահպանվող տարածքների ազգային համակարգը ավելի լավ զինելու համար, ինչը հնարավորություն կտա ներառել և պահպանել ներկայումս թերի ներկայացված էկոհամակարգերը և դրանց կապակցված տեսակները: Համայնքային տարածքներում

ծրագիրը ներդրում կունենա լանդշաֆտների արդյունավետ կառավարման ապահովման գործընթացին, նպաստելով ջրավորության նվազեցմանը: Ծրագիրը կհզորացնի Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի ֆինանսական կայունությունը:

Ծրագիրը ներդրում է ունենում ՄԱԿԶԱՕ (UNDAF) ձեռքբերում 4-ին և ՀԾ (CP) ձեռքբերում 7-ին, ՀԾԳՊ (CPAP) արդյունք 7.4-ին:

Ծրագիրն իրականացնող կազմակերպություններ են հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարությունը (ՀՀ ԲՆ) և նրա «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԲԾԻԳ ՊՀ): Ծրագիրը կատարող հասարակական կազմակերպությունն է (ՀԿ) Բնության Համաշխարհային Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (WWF-Հայաստան):

## II. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ծրագիրը ամբողջությամբ ֆինանսավորվում է Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից և բյուջեն կազմում է 950,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի ընդհանուր բյուջեն, ներառյալ համաֆինանսավորումն ու ԳԷՀ-ի միջոցները, կազմում է 2,950,000 ԱՄՆ դոլար: Համաֆինանսավորումը կազմում է 2,000,000 ԱՄՆ դոլար, ներառյալ ՀՀ ԲՆ կողմից հատկացվող 1,500,000 ԱՄՆ դոլարի համարժեք գումարը և WWF-ի կողմից հատկացվող 500,000 ԱՄՆ դոլարը:

ԳԷՀ-ի կողմից 2012թ. հատկացվող գումարը կազմում է 253,810 ԱՄՆ դոլար, որից 00057439 ենթաձրագրին (Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում) հատկացվող գումարը կազմում է 152,850 ԱՄՆ դոլար (ԲՆ և ԲԾԻԳ ՊՀ), իսկ ՀԿ 00060500 ենթաձրագրինը (Պահպանվող տարածքների ինստիտուցիոնալ կարողությունների զորացում)՝ 100,960 ԱՄՆ դոլար (WWF-Հայաստան):

## III. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները՝ հետևյալ արդյունքների ձեռքբերմամբ.

**1. Ծրագրի կառավարումը:** 2012թ. փետրվարի 28-ին տեղի ունեցավ Ծրագրի Ղեկավար կոմիտեի հանդիպումը: Ղեկավար Կոմիտեն որոշեց. (i) ընդունել 2010-2011թթ. Ծրագրով իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ համապատասխան փոփոխություններ կատարելու պայմանով, (ii) վերանայել 2012թ. աշխատանքային պլանը՝ հաշվի առնելով կոմիտեի անդամների կողմից ստացված առաջարկությունները, և ներկայացնել ՂԿ-ին: ՂԿ-ի որոշման համաձայն հաշվետվությունը և 2012թ. աշխատանքային պլանը համապատասխան փոփոխություններով ներկայացվել են ՂԿ-ին:

**2. Ծրագրի պլանավորում:** Ծրագիրը պլանավորված է համաձայն 2011 թ. հաստատված աշխատանքային պլանի վերանայված բյուջեի և ՂԿ-ի կողմից հաստատված 2012թ. աշխատանքային պլանի:

### 3. Բաղադրիչ 1. ԲՀՊՏ համակարգի ռացիոնալացում:

ԲԾԻԳ ՊՀ-ի կողմից իրականացվել են աշխատանքներ հետևյալ արդյունքների ձեռքբերմամբ.

- Նշանակալից առաջընթաց կա “Հատուկ պահպանվող տարածքների մասին” 2006 թ. ՀՀ օրենքն ապահովող ՀՀ օրենքների փաթեթի մշակման աշխատանքներում: ՀՀ Հատուկ պահպանվող տարածքների համակարգն ապահովող ՀՀ օրենքների փաթեթի /նախագիծ/ շուրջ տեղի են ունեցել հանրային լսումներ, ուսումնասիրվել տարբեր գերատեսչությունների կողմից և համապատասխան փոփոխություններով պետական փորձագիտական եզրակացության համար ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ 2012թ. դեկտեմբերին ՀՀ կառավարություն ներկայացնելու նպատակով: ՀՀ օրենքների փաթեթը ներառում է “Հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին”, “Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին”, “Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքների նախագիծը, փոփոխություններ ՀՀ Հողային և Ջրային օրենսգրքերում: Դրանցից “Հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծը իրականում նոր օրենք է: Մասնավորապես, օրենքի նախագիծը.

1/ բարելավում է գոյություն ունեցող մի շարք բնապահպանական հասկացությունների սահմանումները:

- 2/ սահմանում է ԲՀՊՏ-ների ստեղծման նպատակներն ու հիմքերը
- 3/ հստակ շարադրում է ԲՀՊՏ-ների կառավարման սկզբունքները
- 4/ կատեգորիաների հարցը բացակայում է
- 5/ դասակարգում է Բնության հուշարձանները, նրանց ստեղծման չափորոշիչները և պահպանության ռեժիմը
- 6/ սահմանում է արգելավայրի/IUCN IV կատեգորիա/ պահպանության ռեժիմը
- 7/ սահմանում է պահպանության գոտու, էկոլոգիական միջանցքի և էկոլոգիական ցանցի կառավարման սկզբունքները և պահպանության ռեժիմը
- 8/ սահմանում է կենսոլորտային արգելոցի ստեղծման և կառավարման խնդիրները
- 9/ ապահովում է IUCN-ով սահմանված բոլոր կատեգորիաների ԲՀՊՏ-ների ստեղծումը
- 10/ խթանում է համայնքների ներգրավվածությունը ԲՀՊՏ-ների կառավարմանը:

- “Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևափոխում” տեխնիկական զեկույցի վերաբերյալ ստացված արձագանքների հիման վրա մշակվել են Առաջարկություններ պետական արգելավայրերի կառավարման ինստիտուցիոնալ կապերի ձևավորման վերաբերյալ: Առաջարկությունները քննարկվել են ՀՀ բնապահպանության, տարածքային կառավարման, գյուղատնտեսության, կրթության և գիտության նախարարություններում և ՀՀ ազգային ակադեմիայում: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում շահագրգիռ կողմերի հետ 2012թ. դեկտեմբերին կյոբ սեղան կազմակերպելու նպատակով:
- Մշակվել և Սյունիքի մարզի 7 և Վայոց Ձորի 4 համայնքների հետ քննարկվել է ԲՀՊՏ-ների կառավարման երկու նոր մոդելների՝ 1/ զուտ համայնքային կառավարում և 2/ մասնակցային կառավարում, վերաբերյալ քաղաքականության փաստաթղթի նախագիծը: Առաջարկությունները քննարկելու նպատակով կյոբ սեղանի կազմակերպումը տեղի կունենա 2012թ. դեկտեմբերին:
- Նախատեսված “Գնիշիկ”, “Խուստուփ” և գործող “Զանգեզուր” արգելավայրերում կենսաբազմազանության և գործածելի բույսերի արտադրական պաշարների հետազոտության դաշտային ուսումնասիրությունների վերաբերյալ պատրաստվել և ներկայացվել է զեկույց, որի արդյունքները կօգտագործվեն համապատասխան ՊՏ-ների կառավարման պլանների մշակման և քարտեզագրման աշխատանքներում:

Քարտեզագրական աշխատանքներ են իրականացվել WWF – Հայաստանի կողմից, և ձեռք են բերվել հետևյալ արդյունքները.

- Նախատեսվող Խուստուփ և Գնիշիկ ՊՏ-ների ստեղծման և գործող Զանգեզուր արգելավայրի ընդլայնման գոտիների հստակ քարտեզագրման, սահմանների ուսումնասիրման և նկարագրության աշխատանքները համապատասխան համայնքների և տարածքային կառավարման մարմինների հետ քննարկման փուլում են: Սյունիքի մարզում որոշ տարածայնություններ են ծագել կապված ոսկու հանքերի, ներդրումների հնարավորության և վարձակալած տարածքների հետ կապված: Կատարվում են շտկումներ և լրացումներ՝ վերջնական արդյունքի հասնելու համար և վերջնական քարտեզները նախատեսվում են պատրաստ լինել մինչև այս տարվա վերջ: [k1]

#### 4. Բաղադրիչ 2. Պահպանվող տարածքների ինստիտուցիոնալ կարողությունների գորացում.

WWF Հայաստանի կողմից իրականացվել են աշխատանքներ՝ հետևյալ արդյունքների ձեռքբերմամբ.

- Ընթացքի մեջ են Խուստուփ և Գնիշիկ ՊՏ-ների կառավարման և բիզնես պլանների և նախատեսվող Գնիշիկ ՊՏ-ի պահպանման գոտու տնտեսական զարգացման պլանի պատրաստման աշխատանքները:
- “Զանգեզուր” պետական արգելավայրի ընդլայնման և նախատեսվող “Խուստուփ” ՊՏ-ի վերաբերյալ քննարկումներ են տեղի ունեցել Սյունիքի մարզի 16 և Վայոց Ձորի մարզի 4 համայնքների անդամների և համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Քննարկումների ընթացքում համաձայնեցվել են նախատեսվող “Խուստուփ” ՊՏ-ի և գործող “Զանգեզուր” արգելավայրի ընդլայնման գոտիների քարտեզները /որոնք պարունակում են տվյալներ համայնքային և պետական հողերի հստակ/վերանայված սահմանների վերաբերյալ, ինչպես նաև համայնքային, պետական, գյուղատնտեսական և հողի այլ տիպերը/:
- Նախատեսվող Խուստուփ և Գնիշիկ, ինչպես նաև գործող Զանգեզուր արգելավայրի կառավարման և բիզնես պլանների մշակման աշխատանքները ավարտական փուլում են: Պատրաստվել են կառավարման և բիզնես պլանների մաս կազմող բաղադրիչները. բնական պայմաններ, կենսաբազմազանության պահպանություն, գիտական հետազոտություն և էկոտուրիզմի զարգացում և

**այլն:** Վերջնական կառավարման և բիզնես պլանների նախագծերը, ներառյալ առաջարկված գործողությունների պլանը, պատրաստ կլինի, երբ վերջնականապես հաստատվեն ՊՏ-ների հստակ սահմանները:

- ներքին քննարկումների համար պատրաստվել են նախատեսվող Գնիշիկ ՊՏ-ի պահպանման գոտու տնտեսական զարգացման պլանի ավարտական նախագիծը/վերջինիս իրականացմանն աջակցել է CEFP-ը/, ինչպես նաև կենսապայմանների զարգացման այլընտրանքային սխեմաները:

ԲԾԻԳ ՊՀ-ի կողմից իրականացվել են ուսումնական աշխատանքներ հետևյալ արդյունքների ձևերում:

- ԲՀՊՏ-ների վերաբերյալ իրազեկության բարձրացման սեմինարներ են կազմակերպվել Քաջարան, Գեղի, Լեռնաձոր, Շիկահող, Սրաշեն և Ծավ համայնքների անձնակազմի, խորհրդի անդամների, բնակիչների համար Քաջարան քաղաքում և Շիկահող պետական արգելավայրում 2012թ. ապրիլի 16-17-ը և 19-20-ը /44 մասնակից/:

- Կենսաբազմազանության պահպանության գործում ԲՀՊՏ-ների նշանակության վերաբերյալ դասախոսությունների շարք է ներկայացվել Քաջարանի միջնակարգ դպրոցների աշակերտների համար ապրիլի 18-ին/մոտ 60 աշակերտ/:

- Պատրաստվել է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի համայնքներում իրականացված ԲՀՊՏ-ների վերաբերյալ իրազեկության բարձրացման սեմինարներից քաղած դասերի վերաբերյալ տեխնիկական զեկույցը:

- Համաձայնություն է ձեռք բերվել “Զբոսաշրջության տարածքային կենտրոն” իրավաբանական անձանց միության հետ Գնիշիկի այցելուների և ուսումնական կենտրոնի կրթական և ուսումնական միջոցառումների իրականացման գործում համագործակցության վերաբերյալ: Համաձայն այդ համաձայնագրի “Զբոսաշրջության տարածքային կենտրոնը” Արփա հյուրանոցում/Եղեգնաձոր, Վայոց Ձորի մարզ/ ծառայություններ կտրամադրի իր “Արփա տուր” տուրիստական գործակալության միջոցով:

**5. Իրազեկության բարձրացում և համագործակցություն:** Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի իրականացնող կազմակերպությունների և Ծրագրի ղեկավարի կողմից ոչ պաշտոնական հանդիպումներ և մասնակցային սեմինարներ են կազմակերպվել Լեռնաձոր, Գեղի, Գեղանուշ, Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Ձորաստան, Անտառաշատ, Տաթև, Լոր, Սիսիան, Շենաթաղ, Բնունիս, Դաստակերտ և Նժդեհ համայնքների և համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և խորհրդի անդամների հետ: Հանդիպումներ են տեղի ունեցել Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալի և Քաջարանի քաղաքապետի հետ՝ Ծրագրի զարգացումները ներկայացնելու և կազմակերպչական հարցեր քննարկելու նպատակով: Ոչ պաշտոնական հանդիպումներ և մասնակցային սեմինարներ են կազմակերպվել Վայոց Ձորի մարզում հիմնական շահառուների հետ/Ագարակաձոր, Արենի, Խաչիկ, Մոզրով համայնքներ և տեղական ինքնակառավարման մարմիններ/, ներառյալ 2 հանդիպում նոր ընտրված մարզպետի հետ: Քննարկվել են հետևյալ թեմաները.

- (1) ՊՏ-ներին հարակից համայնքների իրազեկության բարձրացման և ուսուցման կարիքներ
- (2) Գործող և նախատեսվող պահպանվող տարածքների սահմաններ և քարտեզներ
- (3) Մոցիալ-տնտեսական խնդիրներ ըստ համայնքների և հնարավոր զարգացման սցենարներ
- (4) Այլընտրանքային կենսապայմանների ապահովում
- (5) Համայնքների և ՀԿ-ների հետ հնարավոր համագործակցություն համաֆինանսավորման առումով:

Սույն համագործակցության արդյունքները ներառված են նախատեսվող Խուստուփ և Գնիշիկ ՊՏ-ների, գործող Զանգեզուր պետական արգելավայրի միասնական կառավարման և բիզնես պլանների նախագծերում և նախատեսվող Գնիշիկ ՊՏ-ի պահպանման գոտու տնտեսական զարգացման պլանում:

**6. Ծրագրի միջնաժամկետ գնահատում:** Հայտարարությամբ ընտրվել է Ծրագրի միջնաժամկետ գնահատման ազգային խորհրդատու: Ծրագրի միջնաժամկետ գնահատման հաշվետվությունը ԾԿԳ-ի պատասխանի հետ միասին Ծրագրի ղեկավարի կողմից ներկայացվել է Տարածաշրջանային տեխնիկական խորհրդատուին և հաստատվել է:

**7. Մոնիտորինգ և հաշվետվության ներկայացում:** Մոնիտորինգի և հաշվետվության փաստաթղթերը կազմվում են համապատասխան ՄԱԶԾ Ծրագրային մոնիտորինգի և Գնահատման պլանի: 2010թ. և 2011թ. և 2012թ. առաջընթացի հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ԳԷՀ և ՀՀ ԲՆ:

## VI. ԱՊԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

2013թ. նախատեսվում են հետևյալ գործողությունները.

**Բաղադրիչ 1. ԲՀՊՏ համակարգի ռացիոնալացում:**

***Արդյունք 1.1 2006 թ.-ի Հայաստանի բնության պահպանվող տարածքների մասին օրենքի կատարումն ապահովող ենթաօրենսդրաման ակտերի մշակում***

- Աջակցություն ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ ՀՀ օրենքների փաթեթի նախագիծը/“Հատուկ պահպանվող տարածքների մասին մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծ, փոփոխություններ “Տեղական ինքնակառավարման մասին”, “Բնապահպանական վերահսկողության մասին” ՀՀ օրենքներում, ՀՀ Հողային և Ջրային օրենսգրքերում, ինչպես նաև տեղեկանք-հիմնավորում, այլ անհրաժեշտ փաստաթղթեր/ ՀՀ կառավարություն ներկայացնելու համար /ԲԾԻԳ ՊՀ/,
- Հետագա աջակցություն ՀՀ օրենքների փաթեթը ՀՀ Ազգային ժողովում ընդունելու գործընթացին/ԲԾԻԳ ՊՀ/:

***“Արդյունք 1.2 Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևափոխում:***

- Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների վերաբերյալ նորմատիվ-իրավական ակտի մշակում՝ հստակեցնելով արգելավայրերի կառավարմանը, որոշումների կայացմանը և ֆինանսական պարտականություններին /գործողությունների պլան/ համայնքների մասնակցության մեխանիզմները, և ներկայացում ՀՀ ԲՆ հետագա հաստատման համար /ԲԾԻԳ ՊՀ/:

***Արդյունք 1.3 Թերերկայացված էկոհամակարգերում երեք նոր արգելավայրերի ստեղծում***

- Քարտեզագրական աշխատանքների ավարտ/առաջարկվող տարածքների գոտիավորում և նախատեսվող սահմաններ/ WWF Հայաստան/,
- Յուրաքանչյուր պահպանվող տարածքի համար կանոնադրության մշակում, քննարկումներ համայնքների հետ և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հավանություն /ԲԾԻԳ ՊՀ/,
- Տարածքների պաշտոնապես ստեղծումը և սահմանների նշումը. “Գնիշիկ” ՊՏ-ի, “Խուստուփ” արգելավայրի ստեղծման և “Զանգեզուր” արգելավայրի ընդլայնման, ներառյալ յուրաքանչյուր ՊՏ-ի կանոնադրությունը և քարտեզը, վերաբերյալ Կառավարության որոշումների նախագծերի ներկայացում ՀՀ ԲՆ,
- Կառավարման միավորների ստեղծում և յուրաքանչյուր տարածքի համար կառավարման վերաբերյալ համագործակցության համաձայնությունների ձեռքբերում /ԲԾԻԳ ՊՀ, WWF–Հայաստան/:

***Արդյունք 1.4 ԲՀՊՏ կառավարման նոր մոդելների մշակում և փորձարկում***

- ԲՀՊՏ-ների կառավարման երկու նոր մոդելների՝ 1/ զուտ համայնքային կառավարում և 2/ մասնակցային կառավարում, վերաբերյալ նորմատիվ-իրավական ակտի մշակում և ներկայացում ՀՀ ԲՆ հետագա հաստատման համար /ԲԾԻԳ ՊՀ, WWF–Հայաստան/:

**Բաղադրիչ 2. Պահպանվող տարածքների ինստիտուցիոնալ կարողությունների գորացում**

***Արդյունք 2.1. Արգելավայրերի կառավարիչների և տեղական համայնքների համար պետական և տեղական ուսումնական ծրագրեր***

- Երկու մասնագիտական դասընթացների պատրաստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով IUCN IV, V և VI կատեգորիաների զուտ համայնքային և մասնակցային կառավարմանը ՊՏ-ների կարողությունների գորացմանը՝ ընդգրկելով արգելավայրերի կարողությունների հիմնական բացերին վերաբերող ուսումնական թեմաներ. (i) բազմակի օգտագործման պահպանվող տարածքի տարածական պլանի նախագծում, (ii) իմաստալից կառավարման պլանի և իրատեսական բիզնես պլանի նախագծում՝ նպատակ ունենալով տեղական եկամտաստեղծ գործողություններից օգտվելը, հաշվապահական հաշվառման հիմունքները, բյուջեի կազմումը և դրամաշնորհային հայտերի պատրաստումը, (iii) կայուն զբոսաշրջության գործողությունների մշակում և գործարկում, (iv) կոնֆլիկտների կառավարում, (v) կենսաբազմազանության մոնիտորինգի տեխնիկա, (vi) օրենքի գործադրում, (vii) հասարակության իրազեկում և տարածում/ԲԾԻԳ ՊՀ/,
- Նախատեսվող “Խուստուփ” և “Զանգեզուր” արգելավայրերի և համայնքային կառավարմամբ

- “Գնիշիկ” ԲՀՊՏ-ի կառավարիչների և ՊՏ-ներին հարակից համայնքների համար դասընթացների իրականացում ,
- Սյունիքի մարզում կրթական և ուսումնական միջոցառումների տեղակայման և իրականացման համար համագործակցության վերաբերյալ համաձայնությունների ձեռքբերում/ԲԾԻԳ ՊՀ/,
- ՀՀ ԲՆ հետ համաձայնության ձեռքբերում Ծրագրի ավարտից հետո դասընթացների կայուն ֆինանսավորման վերաբերյալ/ԲԾԻԳ ՊՀ, WWF–Հայաստան/:

**Արդյունք 2.2. Երեք արգելավայրերի կառավարման և բիզնես պլանների մշակում**

- Փորձնական տարածքներում սեմինարների կազմակերպում պահպանության կառավարման մարտահրավերների և արձագանքների վերաբերյալ շահագրգիռ կողմերից կարծիքների հայցման նպատակով/ԲԾԻԳ ՊՀ, WWF–Հայաստան և ԾԿԳ/,
- ՊՏ-ների կառավարման պլանների ավարտ, ներառյալ տարածքի ֆիզիկական և կենսաբանական բնութագրերը, վտանգները, տարածքի հեռանկարը և պահպանության առաջնահերթությունները, հաստիքացուցակը, ենթակառուցվածքի պահանջները, 4-ամյա պահպանության կառավարում և մոնիտորինգի պլան /WWF–Հայաստան/,
- Բիզնես պլանների մշակման ավարտ. գործառնական և կապիտալ ծախսեր՝ սահմանելով պաշարների ռացիոնալ օգտագործման, հաստիքացուցակների ընդունման և կառավարման պլանների հետ կապված հիմնական բյուջեից եկամտի աղբյուրները, տեղական եկամտի ստեղծման և բիզնես հնարավորությունների մեխանիզմների մշակումը, այնպես, որ եկամուտները օպտիմալ կերպով համապատասխանեն ծախսերին/ԲԾԻԳ ՊՀ, WWF–Հայաստան /,
- Միասնական կառավարման և բիզնես պլանների մշակման ավարտ և ներկայացում տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ընդունման նպատակով /WWF–Հայաստան / :

**Արդյունք 2.3. Աջակցություն կառավարման և բիզնես պլանների իրականացմանը**

- “Գնիշիկ” ՊՏ-ի գլխավոր գրասենյակի նախագծում/ WWF–Հայաստան /,
- Համայնքների և արգելավայրերի ղեկավարների կողմից որսագողության դեմ գործիքների մշակում և իրականացում, որը ներառում է որսագողության մոնիտորինգ և որսագողության աղբյուրների որոշում/ WWF–Հայաստան /,
- Ավանդական գործիքների, ինչպես օրինակ, վտանգված տեսակների հիմնական ապրելավայրերի մուտքի սահմանափակում, ցուցանակների տեղադրում, տեսչական համակարգի բարելավում, ուսումնասիրում /ԲԾԻԳ ՊՀ, WWF–Հայաստան /,
- Գործընկերության հաստատում տարածքային բնապահպանական տեսչության, ոստիկանության և լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ /WWF–Հայաստան /,
- Թիրախային ապրելավայրերի մոնիտորինգային հետազոտության մշակում և իրականացում հանայնքի անդամների ներգրավմամբ, որի նպատակն է հետազոտությունների արձանագրությունների մշակման և GPS և GIS տեխնոլոգիաների կառավարման կարողությունների զորացումը/WWF–Հայաստան /,
- “Գնիշիկ” փորձնական տարածքում խոշոր եղջերավոր կենդանիների արածեցման ծրագրի մշակում և իրականացում / WWF–Հայաստան /,
- “Գնիշիկ” փորձնական տարածքում զբոսաշրջության կառավարման մոդելի ստեղծում և իրականացում՝ պահպանելու կենսաբազմազանության միասնականությունը և որպես գործիք օգտագործվելու կրթության և էթիկայի պահպանումը խթանելու նպատակով /WWF–Հայաստան /:

**Արդյունք 2.4. Քաղված դասերի արձանագրում և այլ վայրերում կիրառելու համար պատրաստում**

- Ազգային մակարդակով սեմինարների իրականացում՝ Ծրագրի ձեռքբերումները և գործողությունները տարածելու նպատակով,
- Ազգային մակարդակով կազմակերպված սեմինարների արդյունքների հրապարակում և տարածում:

Ծրագրի փաստացի ծախսը 2012թ. 3 կիսամյակների համար կազմում է 182,108 ԱՄՆ դոլար /71.75%, որից ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439 ենթաձրագրի ծախսը` 109,412 ԱՄՆ դոլար (71.58 %), իսկ ՄԱԶԾ/ԳԷՀ 000605000 ենթաձրագրինը` 72,696 ԱՄՆ դոլար (72.0%):

2012թ. վերջում ակնկալվող ծախսը կկազմի 237,570 ԱՄՆ դոլար (93.6 %), որից ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439 ենթաձրագրի ծախսը` 143,870 ԱՄՆ դոլար (94.1 %), իսկ ՄԱԶԾ/ԳԷՀ 000605000 ենթաձրագրինը` 93,700 ԱՄՆ դոլար (92.8%):